

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ
ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

(Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր)

«Արմավիրի մարզպետը և մարզպետարանի աշխատակազմը՝ ղեկավարվելով «Օրենսդրությամբ, «Նախագահի հրամանագրերով, կարգադրություններով, «Կառավարության և «Վարչապետի որոշումներով և այլ նորմատիվ իրավական ակտերով, 2010թ. աշխատանքային գործունեությունը սկսել են մարզի 97 համայնքների և շուրջ 287 հազար բնակչության հիմնախնդիրներից բխող մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների իրականացմամբ:

Ֆինանսների բնագավառ

Կազմակերպվել և իրականացվել են մարզպետարանի և նրա ենթակայության թվով 121 ՊՈԱԿ-ների և 8 ՊՓԲԸ-ների 2010թ. պահպանման ծախսերի նախահաշիվների և հաստիքացուցակների կազմման, հաստատման, տարիֆիկացիոն մատյանների ու դրանցում կատարված փոփոխությունների ուսումնասիրության և վերլուծության աշխատանքները: Կազմվել է մարզային ենթակայության ՊՈԱԿ-ների 2010թ. գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների փաթեթները: Իրականացվել է կրթական հաստատությունների աշակերտների թվաքանակի և դասարան կոմպլեկտի փոփոխությունների հետ կապված ուսումնական գծով պետական պատվերի չափաքանակների ճշտում: Յուրաքանչյուր ամիս կազմվել է մարզպետարանի պատվիրատվությամբ իրականացվող ծրագրերի ֆինանսավորման հայտերը և իրականացվել դրանց ֆինանսավորումը և կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվություն ներկայացրել «Ֆինանսների նախարարություն և «Կառավարության աշխատակազմ:

Մշակվել են մարզպետարանի կողմից իրականացվող ծրագրերի 2011-2013թթ. միջնաժամկետ զարգացման ծախսային ծրագրերը: Իրականացվել է մարզային ենթակայության 121 ՊՈԱԿ-ների կատարված բյուջետային ծախսերի և պարտքերի մասին հաշվետվությունների ընդունման, ամփոփման և «Ֆինանսների նախարարություն ներկայացման աշխատանքները, ինչպես նաև թվով 8 առողջապահական ՊՓԲԸ-ներից ստացված եռամսյակային և տարեկան ֆինանսատնտեսագիտական մոնիթորինգի վերաբերյալ ցուցանիշների ճշգրտման, ամփոփման և «ԿԱ պետական գույքի կառավարման վարչություն ներկայացման աշխատանքները:

Ցուցաբերվել է մեթոդական և խորհրդատվական օգնություն համայնքներին՝ 2010թ. բյուջեների փոփոխության և 2011թ. բյուջեների կազմման գործընթացում: Իրականացվել է մարզի համայնքների 2011թ. հաստատված բյուջեների գործող օրենսդրությանը համապատասխանության վերաբերյալ ուսումնասիրություններ, ինչպես նաև 2010թ. ճշտված բյուջեների ամփոփում և ներկայացում «Ֆինանսների նախարարություն և «Տարածքային կառավարման նախարարություն:

Կազմվել և «Տարածքային կառավարման նախարարություն ու համապատասխան գլխադասային մարմիններին է ներկայացվել 2011թ. պետական բյուջեի նախագծով մարզպետարանի պատվիրատվությամբ կատարվող ծախսերի բյուջետային հայտերը, ինչպես նաև մարզպետարանի կողմից իրականացվող ծրագրերի 2011թ. ծրագրային բյուջետավորման հայտերը:

Կազմվել և «Էկոնոմիկայի նախարարության հետ համաձայնեցվել է 2011թ. պետական բյուջեի միջոցների հաշվին մարզպետարանի կարիքների համար անհրաժեշտ աշխատանքների, ծառայությունների, ապրանքների անվանացանկերը:

Մարզի թվով 97 համայնքներից ընդունվել է բյուջեների եկամուտների և ծախսերի կատարման ընթացքի վերաբերյալ ամսական և եռամսյակային հաշվետվություններ, ամփոփվել և ներկայացվել է վերահսկիչ պալատ, «Տարածքային կառավարման նախարարություն:

Կազմակերպվել և իրականացվել է մարզի համայնքների բյուջեների եկամուտները նվազեցնող տեղեկատվության հավաքագրման, ստուգման և ըստ համայնքների ամփոփման աշխատանքները:

Ընդունվել և ամփոփվել է պետական բյուջեից մարզի համայնքների բյուջեներին դոտացիայի հատկացման ընթացքի, համայնքների բյուջեներին ամրացված եկամուտների կատարման ընթացքի և բյուջեներով կատարվող ծախսերի կատարման մասին տեղեկատվությունը: Իրականացվել է մարզպետարանի աշխատակազմի հաշվապահական հաշվառման, աշխատակազմի ֆինանսական, հարկային, սոցիալական ապահովության պարտադիր վճարների և վիճակագրական հաշվետվությունների ներկայացում համապատասխան մարմիններին:

Վարչական վերահսկողություն է իրականացվել մարզի թվով 9 համայնքներում:

Սոցիալական ապահովության բնագավառ

2010թ. կազմակերպվել և իրականացվել են մարզպետարանի աշխատակազմի Արմավիրի, Վաղարշապատի և Բաղրամյանի ՄԾՏԳ-ներում «Ընտանիքների անապահովության գնահատման» համակարգով հաշվառված ընտանիքների փաստագրման և վերափաստագրման աշխատանքները:

«Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրի շրջանակներում մարզին պետական բյուջեից հատկացվել է 5 մլն.641 հազ. դրամ: 2010թ. իրականացվել են մարզպետի կողմից հաստատված թվով 11 ծրագրեր, որորնք հիմնականում ունեցել են համայնքների փողոցների բարեկարգման և սանիտարական մաքրման օժանդակ աշխատանքների բնույթ: Աշխատանքներին մասնակցել են 74 մարդ, որից 6-ը՝ հաշմանդամներ: Համայնքների ղեկավարների կողմից ներկայացված 2011թ. հայտ-առաջարկները /մոտ 14 մլն. դրամի չափով/ ներկայացվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

2010թ. մարզպետարանում հաշվառվել են բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող արցախյան պատերազմում զոհված 13 և հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) 19 ընտանիքներ:

Մարզպետարանի կողմից իրականացվող ծրագրերի այլ նպաստներ բյուջեից հոդվածով դրամական օգնություն է հատկացվել 237 ընտանիքների՝ 15 մլն.620 հազ. դրամ գումարի չափով:

«Լայթհաուս» (Փարոս) բարեգործական հիմնադրամի կողմից մարզում իրականացվում են սոցիալական ուղղվածության ծրագրեր՝ 2010թ. թվով 12 անհատ ֆիզիկական անձանց և 22 համայնքների թվով 1684 ընտանիքների տրամադրվել է սոցիալական ուղղվածության օգնություն:

Կազմակերպվել են «Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի» հինգ նիստեր:

Հաշմանդամ շահառու երեխաների հարցերով զբաղվող ՀԿ-ների հետ միասին «Նահիրի» հաշմանդամ երեխաների ծնողների միություն ՀԿ-ն մարզի 2-14 տարեկան հաշմանդամ երեխաների ներկայացրել է Գերմանիայի Հանրապետությունից ժամանած բժիշկների կողմից հետազոտության: Վիրահատման անհրաժեշտություն ունեցող 3 երեխաներ ենթարկվել են վիրահատման, նախապատրաստվում է մեկնելու ևս 1 երեխա Մեծամոր քաղաքից:

ՄԱԿ-ի հիմնադրամի աջակցությամբ Արմավիր քաղաքի թիվ 1 մշակույթի տան հրապարակում հաշմանդամ երեխաներին բաժանվել են նվերներ, վերնաշապիկներ, գրենական պիտույքներ և նկարների ալբոմներ, 40 ալբոմներ նվերի ձևով տրամադրվել է գիշերօթիկ մանկապարտեզին՝ բացման կապակցությամբ:

«Նահիրի» ՀԿ-ն պատրաստվում է իրականացնելու «Կյանքի ծառ Հայաստանի համար» սոցիալական ուղղվածության ծրագիր, որի հովանավորն է Գերմանիայի «Տիրու» կազմակերպությունը: Ծրագիրը կնպաստի հաշմանդամ երիտասարդների և նրանց ընտանիքների աշխատատեղերի և մասնագիտացման ապահովմանը:

<<Նուռ>> ՀԿ-ն համագործակցելով <<Հյուսն դիքնիգի ընդ փիս>> բարեգործական հիմնադրամի հետ, փոքր գրանտային ծրագրի միջոցով կենտրոն հաճախող հաշմանդամ և սոցիալապես անապահով երեխաների ուղարկել է ճամբար հանգստանալու: Կազմակերպել է էքսկուրսիաներ, ինչպես նաև տիկնիկային թատրոնի ներկայացումների դիտում:

<<Փարոս>> բարեգործական հիմնադրամի հետ իրականացվել է հաշմանդամ երեխաների ծնողների իրազեկման խնդրով հանդիպումների ծրագիր <<Նուռի>> գրասենյակում, ուր գործում են նաև նկարչական և դիզայնական խմբակներ:

Ըստ զբաղվածության մարզային կենտրոնի 2010թ. տվյալների մարզի երեք կենտրոններում հաշվառված 5 հաշմանդամների (որից 4-ը՝ կին) համար իրականացվել է <<Աշխատաշուկայում խոցելի խմբերին աշխատանքի ընդունելու դեպքում աշխատավարձի մասնակի փոխհատուցում>> ծրագիրը: Գործազուրկների մասնագիտական ուսուցման ծրագրով ուսուցանվել են 35 մարդ, որից 2-ը՝ հաշմանդամներ:

Հաշմանդամների ֆիզիկական մատչելիության խնդիրների հետ կապված մարզի հիմնականում քաղաքային համայնքների կրթական, մշակութային և հասարակական այլ կառույցներում կառուցված են թեքահարթակներ, այդ աշխատանքները շարունակական են:

2010թ. հերթական անգամ կազմակերպվել է մարզի պրոթեզի կարճ ունեցող հաշմանդամներին տեղում անհրաժեշտ պարագաներ տրամադրելու ակցիա, արդյունքում՝ 18 հաշմանդամներ ստացել են համապատասխան պարագաներ:

Մարզպետարանի կողմից իրականացվող ծրագրերի այլ նպաստներ բյուջեից հողվածով դրամական օգնություն է հատկացվել հաշմանդամների և հաշմանդամ ունեցող 64 ընտանիքների՝ 1 մլն. 932 հազ. դրամի չափով:

2010թ. Արմավիրի երեխայի զարգացման վերականգնողական կենտրոնում ամբուլատոր զննվել են 50 հիվանդներ, ընդունվել և վերականգնողական բուժում են ստացել 45 հաշմանդամ երեխաներ:

Համաձայն <<1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթած փախստականների համար կառուցված բնակարանները սեփականության իրավունքով փախստականներին հատկացնելու մասին>> ՀՀ օրենքի, կազմվել են 3 որոշման նախագծեր բնակարանների անհատույց մասնավորեցման մասին:

Համագործակցելով ՀՀ ԿԱ փախստականների և միգրացիայի վարչության հետ, իրականացվում են փախստականների հպատակագրման աշխատանքներ, արդյունքում՝ 18 փախստականներ ընդունել են ՀՀ քաղաքացիություն:

Իրականացվել են մարզի սակավ ապահովված ընտանիքների դպրոցահասակ 215 երեխաների Հանքավանի <<Հասմիկ>> ճամբարում ամառային հանգիստի կազմակերպման աշխատանքները:

ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչությունից ստացված անչափահաս երեխաների վերաբերյալ տեղեկատվության արդյունքում 4 անչափահասներ դուրս են եկել հաշվառումից, 26 անչափահասների նկատմամբ նշանակվել են հասարակական դաստիարակներ, իսկ 6 անչափահասների վարքագիծի նկատմամբ սահմանվել է հատուկ հսկողություն:

2010թ. ներկայացվել սկզբնական հաշվառման վերցված առանց ծնողական խնամքի մնացած թվով 3 երեխաների անձնական գործեր, ովքեր վերցվել են տարածքային հաշվառման: Վկայագրվել է թվով 100 երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:

ՀՀ տարածքում բնակվող ՀՀ 10 քաղաքացիներ վերցվել են հաշվառման, որպես որդեգրել ցանկացող անձինք, և 3 երեխա վերցվել է հաշվառման, որպես որդեգրման ենթակա երեխա:

Երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն է տեղավորվել թվով 5 երեխա: Մանկատուն են տեղավորվել թվով 6 երեխա, որից 2-ը՝ մասնագիտացված:

Առողջապահության բնագավառ

Ապահովվել է մարզի տարածքում պետական առողջապահական ծրագրերի կազմակերպումը և իրականացումը: Աջակցություն է ցուցաբերվել ՊՀՀ մարմիններին վերահսկողական աշխատանքներ իրականացնելիս: Ապահովվել է բժշկական կադրերի վերապատրաստման և վերաորակավորման գործընթացի աշխատանքները: 2010թ. մարզային ենթակայության առողջապահական հաստատություններում տնօրենների թափուր հաստիքներ չեն առաջացել, որի պատճառով տնօրենների ընտրության մրցույթներ չեն կազմակերպվել: Համաձայն մարզպետի 26.12.2010թ. ժամանակացույցի և ՀՀ առողջապահության նախարարի 14.12.2010թ. N 1990-Ա հրամանի՝ նեղ մասնագետների կողմից մարզի համայնքներում բժշկական զննության են ենթարկվել թվով 2892 հիվանդների, որոնցից 193-ը ուղեգրվել են հիվանդանոցային բուժման: <Տուբերկուլոզի ազգային ծրագրի>> շրջանակներում մարզի պոլիկլինիկաների տուբերկուլոզային կաբինետների կողմից հաշվառման են վերցվել 164 հիվանդներ: Կատարվել է խորխի 2488 հետազոտություններ: Մարտ ամսից մարզում սկսվել է դեղորայքակայուն տուբերկուլոզով հիվանդների բուժումը: Հաշվանդամներին, զոհված ազատամարտիկների ընտանիքների անդամներին տրվել են առողջարանային վերականգնողական բուժման 54 ուղեգրեր, որից՝ Արզնի 10, Ջերմուկ 13 և Գանձաղբյուր 31:

Գարնանային և աշնանային զորակոչից առաջ համալրվել և հաստատվել է զորակոչային բժշկական հանձնաժողովների կազմերը, նրանց տրամադրվել անհրաժեշտ բուժսարքավորումներ՝ զորակոչիկների հետազոտությունները պատշաճ մակարդակով կազմակերպելու համար: Ի կատարումն ՀՀ ԱՆ 28.12.2004թ. N 1347-Ա հրամանի՝ Արմավիրի և Վաղարշապատի պոլիկլինիկաների կողմից հաշվետու ժամանակաշրջանում հետազոտության նպատակով երևան են ուղարկվել 2658 զորակոչիկներ, վճարվել է 1 մլն.225 հազ. 650 դրամ ճանապարհաձախս:

Դիլիջանի մանկական հակատուբերկուլոզային առողջարանի ուղեգրեր են հատկացվել մարզի տուբերկուլոզով հիվանդ ունեցող ընտանիքների կոնտակտավոր մինչև 18 տարեկան թվով 293 երեխաների:

2010թ. ընթացքում մարզպետարանի ենթակայության առողջապահական հիմնարկներից ոչ մեկը աշխատավարձի և սոցիալական վճարների գծով պարտքեր չունեն: Դեղորայքի, էլեկտրաէներգիայի և այլ հողվածներով կրեդիտորական պարտքեր ունեն Բաղրամյանի պոլիկլինիկան՝ 2 մլն. 263 հազ. 100 դրամ և Վաղարշապատի ծննդատունը՝ 1 մլն. դրամ, որը կմարվի 2011թ. փետրվար ամսին:

<<Ընտանեկան բժշկության զարգացում>> բաղադրիչի շրջանակներում ձևավորված ընտանեկան բժշկության միօրինականացված 12-ամսյա և 6-ամսյա կրթական ծրագրերում 2010թ. ընդգրկվել է 3 բժիշկ և 25 բուժքույր: Ի կատարումն ՀՀ կառավարության 2006թ. մարտի 30-ի թիվ 420-Ն որոշման և ՀՀ առողջապահության նախարարի 18.01. 2007թ. N 57-Ն հրամանի, մարզում շարունակվում է ԱԱՊ բժշկի ընտրության և գրանցման գործընթացը, գրանցվել է մարզի ազգաբնակչության 90-95%-ը:

ՀՀ նախաձեռնությամբ և մարզպետի աջակցությամբ, կուսակցության հիմնադրման 20-ամյակի կապակցությամբ, մարզում իրականացվել է <<Բաց դռների օրեր>> բարեգործական ծրագիր նեղ մասնագետների մասնակցությամբ, որի ժամանակ հետազոտվել և բուժօգնություն են ստացել տարբեր ախտորոշումներով 1150 հիվանդներ:

Լույս հայի աչքերին <<Հայ ակնաբուժություն նախագիծ>> բարեգործական հիմնադրամի կողմից 2010թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին աչքի շարժական հիվանդանոցում հետազոտվել են աչքերի հետ խնդիրներ ունեցող 756 հիվանդներ, որից 353-ը ենթարկվել են վիրահատության:

Մարզպետարան դիմաժ 123 քաղաքացիների տրվել են միջնորդագրեր և ուղեգրեր մարզի տարածքում գործող հիվանդանոցներում և հանրապետության մասնագիտական բուժհաստատություններում պետական պատվերի շրջանակներում ստացիոնար բուժում ստանալու և հետազոտության ենթարկվելու համար:

2010թ. մարզում համաճարակային իրավիճակը եղել է կայուն և վերահսկելի: Չեն արձանագրվել տարափոխիկ հիվանդությունների և սննդային թունավորումների զանգվածային դեպքեր:

Մարզում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի ազգային ծրագրի իրականացման շրջանակներում, տուբերկուլյոզի, մալարիայի, ՄԻԱՎ/ՁԻԱՀ -ի, H1N1 վիրուսային վարակի և սեզոնային գրիպի, թոչնագրի կանխարգելման նպատակով, մարզպետի կարգադրություններով ստեղծվել և գործում են գերատեսչական հանձնաժողովը, օպերատիվ և մասնագիտական արագ արձագանքման շտաբները:

Բնակավայրի ջրամատակարարման, բնակելի շենքերի, դպրոցների և այլ օբյեկտների սանիտարական վիճակի նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս ցուցաբերվել է կազմակերպչական բնույթի աջակցություն ՀՀ ԱՆ ՊՀՀՏ-ը:

Միջին բուժանձնակազմի միջոցով աջակցություն է ցուցաբերվել դպրոցներում և նախադպրոցական հիմնարկներում ջերմային ռեժիմի ապահովման, բացակայությունների գրանցման և հիվանդությունների հայտնաբերման նկատմամբ իրականացվող մոնիտորինգի աշխատանքներին:

- 2010թ. շահագործման է հանձնվել «Արմավիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հիվանդանոցային մասնաշենքը, որի վերակառուցման և վերագինման աշխատանքները սկսվել էին 2009թ. հուլիս ամսից, Համաշխարհային բանկի վարկային ծրագրով: Հիվանդանոցի բացման արարողությանը մասնակցել է Հյաստանի Հանրապետության Նախագահը:
- Վաղարշապատի տարածքում ավարտվել է «Փրկեք երեխաներին» միջազգային կազմակերպության կողմից 2010թ. սկսված թվով 22 բուժամանկաբարձական կետերի շենքերի վերանորոգման աշխատանքները:
- Ոչ պետական միջոցներով վերանորոգման են ենթարկվել մարզային ենթակայության «Վաղարշապատի հիվանդանոց» ՊՓԲԸ-ն մեկ բաժանմունք և երկու բաժանմունքների սան-հանգույցներ:
- Իր միջոցների հաշվին վերանորոգման է ենթարկվել «Վաղարշապատի պոլիկլինիկա» ՊՓԲԸ և Զվարթնոցի պոլիկլինիկայի մասնաշենքը:
- Գլոբալ հիմնադրամի միջոցներով «Արմավիրի Բ/Կ» ՓԲԸ պոլիկլինիկայի մասնաշենքի առաջին հարկում կառուցվել և շահագործման է հանձնվել առանձին մուտքով հակատուբերկուլյոզային կաբինետը:
- COAF-ի միջոցներով վերանորոգվել է Բաղրամյանի տարածաշրջանի պոլիկլինիկան և վերանվանվել «Հիսուսի մանուկներ» առողջության կենտրոն ՓԲԸ:

Կրթության բնագավառ

Կազմվել է և ՀՀ կրթության և գիտության նախարարություն է ներկայացվել 2010-2012թթ. մարզի հանրակրթական համակարգի միջնաժամկետ ծախսային ծրագիրը:

Կազմվել և ներկայացվել է ՀՀ ԿԳ և ՏԿ նախարարություններ մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններից դուրս մնացած պարտուսահասակ երեխաների ցուցակները, ինչպես նաև հավաքվել է 10-րդ դասարան ընդգրկված և նախորդ ու ընթացիկ ուսումնական տարիների դպրոցից ազատված երեխաների ցուցակները և նրանց վերաբերյալ տվյալները:

Կազմակերպվել է ՀՀ ԿԳ նախարարության և ՌԴ համատեղ հայտարարված ռուսաց լեզվի ուսուցիչների մրցույթի անցկացումը: ՀՀ ԿԳ նախարարություն է ներկայացվել «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան դասավանդող ուսուցիչների մասին տեղեկատվություն:

Կազմակերպվել են դպրոցականների հանրապետական օլիմպիադաների դպրոցական, տարածքային և մարզային փուլերը, հանրապետական փուլի մասնակիցների ապահովման աշխատանքները:

Գնահատման և թեստավորման կենտրոն է ներկայացվել հանրակրթական դպրոցների 9-րդ և 11-րդ դասարանցիների ընտրովի առարկաների ավարտական քննություններ հանձնողների թվերը: Կազմակերպվել են քննական ուղեցույցները դպրոցներին բախշման աշխատանքները:

Աջակցություն է ցուցաբերվել «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ կողմից ավարտական քննությունների, ինչպես նաև «Կենգուրու» միջազգային մաթեմատիկական մրցույթի կազմակերպման և անցկացման աշխատանքներին: Շարունակվել է «Լավագույն տնօրեն», «Լավագույն ուսուցիչ» մրցույթների տարածքային և մարզային փուլերի անցկացման ու կազմակերպման աշխատանքները: Հանրակրթական դպրոցներում կազմակերպվել են «ՀՀ Սահմանադրություն» թեմայով բաց դասերի և «Իմ երկրի հիմնական օրենքը» թեմայով շարադրությունների մրցույթները, լավագույններն արժանացել են մարզպետի խրախուսանքին:

Շարունակվել է դպրոցների ապահովումը սահմանամերձ համայնքներից մանկավարժական բուհեր գործուղված և նպատակային ընդունելության ընթացակարգով ընդունված մանկավարժական կադրերով: Դպրոցներին են հանձնվել հիմնական ընդհանուր կրթության վկայականներ և միջնակարգ կրթության ատեստատներ: Կազմակերպվել և վերահսկվել է էքստեն թնությունների անցկացման ընթացքը: Վերահսկվել է մեթոդական ձեռնարկների բաշխման գործընթացը:

Համագործակցելով տարածքային զինկոմիսարիատների հետ, ներկայացվել է համապատասխան տեղեկատվություն դպրոցների վերաբերյալ, որի հիման վրա համատեղ կազմվել են «Ռեզումեներ» առարկայի դասավանդման բարելավմանն ուղղված տարեկան միջոցառումների պլաններ: Աշխատանքներ են կատարվել մարզի հանրակրթական դպրոցների զինղեկների վերապատրաստման ուղղությամբ: Կազմակերպվել են օլիմպիադաներ «Ռեզումեներ» առարկայի վերաբերյալ: Վաղարշապատի թիվ 5 դպրոցի թիմը մասնակցել է «Նախագորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերին»: Աշխատանքներ են տարվել դպրոցներում զենքի պահպանման սենյակների կահավորման և ուսումնական զենքով ապահովելու ուղղությամբ: «Լավագույն զինղեկ» և «Լավագույն ռազմական լսարան» հանրապետական մրցույթին մարզից մասնակցած թվով 2 դպրոցները ճանաչվել են հաղթող: Կազմակերպվել են դպրոցականների զորամասեր և սպաների դպրոցներ այցելություններ, դպրոցներում անցկացվել են արիության դասեր:

Վերահսկվել է ջեռուցման սեզոնի կազմակերպման, դպրոցների դասարաններում համապատասխան ջերմության ապահովման և հեղուկ վառելանյութի անվտանգ օգտագործման վերահսկման աշխատանքները, ինչպես նաև հանրակրթական դպրոցների սննդի բլոկների սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխանության ուսումնասիրությունը:

Քաղաքաշինության բնագավառ

ՀՀ 2010թ. պետական բյուջեի միջոցներով մարզպետարանի ծրագրերով մարզին հատկացվել է 77595.0 հազ.դրամ՝ Հոկտեմբեր և Բամբակաշատ գյուղերի դպրոցների հիմնանորոգման աշխատանքների շարունակման և Այգեկ գյուղի նոր դպրոցի շինարարության աշխատանքներ կատարման համար: Բոլոր օբյեկտներում բյուջեի հատկացումների շրջանակներում աշխատանքներն ավարտվել են: Բարերարի կողմից ավարտին կհասցվի «գ.Այգեկի դպրոց» օբյեկտի շինարարությունը:

Կազմվել և համապատասխան լիազոր մարմիններին է ներկայացվել մարզի տրանսպորտի և կապի, քաղաքաշինության և էներգետիկայի ոլորտների 2011-2013թթ. ՄԺԾ ծրագրերը:

2010թ. մարտին տեղի ունեցած ուժեղ քամու հետևանքով վնասված մարզի մի շարք համայնքների դպրոցական շենքերի և բնակելի տների վիճակները ուսումնասիրվել են՝ վերականգնման համար անհրաժեշտ գումարի չափը (4801.8 հազ.դրամ) և ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարին, արդյունքում՝ դպրոցների տանիքները վերանորոգվում են:

ՀՀ կառավարության որոշմամբ մարզպետարանին հատկացվել է 61191.0 հազ. դրամ՝ մարզի 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող, քանդման ենթակա Ակնալիճ համայնքի Նաիրյան թաղամասի N 1 բազմաբնակարան շենքի բնակիչների վերաբնակեցման՝ բնակարանային խնդրի լուծման համար, իսկ Ոսկեհատ համայնքին՝ կասեցվել է:

Մարզի համայնքների գլխավոր հատակագծեր մշակման նպատակով կազմակերպված Փարաքար և Մերձավան գյուղերի գլխավոր հատակագծերի համաձայնեցման աշխատանքները ավարտման փուլում են:

Բնակավայրերի մաքրման և աղբահեռացման ուղղությամբ պարբերաբար ստուգայցեր են կատարվել համայնքներ: Աշխատանքներ են տարվել մարզի համայնքների ղեկավարների հետ ՀՀ ուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթների կատարման ուղղությամբ:

Տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառ

2010թ. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի համաձայնեցմանն է ներկայացվել ներմարզային ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիների ցանկը և մրցույթների անցկացման ժամանակացույցը: Ուսումնասիրվել է հանրապետական նշանակության «Մեծամոր-Գայ-Հովտաշատ» ճանապարհահատվածն ամբողջությամբ և նրա վրա գտնվող թիվ 10 ջրահավաքի կամուրջը: Կամուրջն այժմ գտնվում է վերանորոգման փուլում:

Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհներին հարող տարածքներում կուտակված աղբի մաքրման աշխատանքների կազմակերպման նպատակով ուսումնասիրվել են 109կմ միջպետական և 186կմ հանրապետական նշանակության ճանապարհներ և տեղեկատվություններ է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման նախարարին: Ուսումնասիրվել է «Հարավ-Կովկասյան երկաթուղի» ՓԲԸ տնօրինության մասնագետների հետ համատեղ մարզի տարածքով անցնող բոլոր երկաթուղային գծանցները, կազմվել է համապատասխան ակտ՝ հայտնաբերված մի շարք թերությունները վերացնելու վերաբերյալ: Ուսումնասիրվել է S-3-17 «Մ-5-Մրգաշատ-Սովետական-Նոր Արտագերս» տեղական նշանակության ավտոճանապարհի վրա գտնվող Մրգաշատի կամուրջը և կամուրջի վրա առաջացած ճեղքվածքները վերացնելու առաջարկ է ներկայացվել: Մարզպետի միջնորդությամբ վերանորոգվել է Տալվորիկ համայնքը մարզկենտրոնին միացնող S-3-27 ավտոճանապարհի վրա գտնվող ջրահավաքը: Ուսումնասիրվել են մարզային նշանակության 209.4կմ երկարությամբ ճանապարհները, ընթացիկ և ձմեռային պահպանության է ենթարկվել ճանապարհների 65%-ը: 2010թ. աջակցություն է ցուցաբերվել Հ-17 հանրապետական նշանակության «Արմավիր-Իսահակյան-Գյումրի» ավտոճանապարհի Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող 9.1կմ ճանապարհահատվածի հիմնանորոգման աշխատանքներին:

Տնտեսական զարգացման բնագավառ

Իրականացվել է մարզպետարանի աշխատակազմի կառացվածքային ստորաբաժանումների զարգացման ընթացիկ և հեռանկարային ծրագրերի համակարգման, դրանց կատարողական հաշվետվությունների ամփոփման, մարզը ներկայացնող սոցիալ-տնտեսական ցուցանիշների գծով վիճակագրական տեղեկությունների հավաքագրման,

պետական բյուջեի հաշվին իրականացված ծրագրերի մոնիթորինգի, սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված ՀՀ կառավարության որոշումների նախագծերի և ոլորտը կարգավորող օրենքների նախագծերի քննարկման, այլ ծրագրերով և ներդրումներով մարզի համայնքներում կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության հավաքման, վերլուծության և ամենակարևոր խնդրի՝ մարզի սոցիալ-տնտեսական զարգացման 2011-2014թթ. ռազմավարական ծրագրի մշակման և ՀՀ կառավարության հաստատմանը ծրագրի ներկայացման աշխատանքները:

Սերտ է եղել համագործակցությունը «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի Արմավիրի մասնաճյուղի հետ՝ առանձին ծրագրերի մշակման, դրանք դոնորներին և ծրագրերի իրականացման գրասենյակներին ներկայացնելու ուղղությամբ:

Ապահովվել է համագործակցությունը ՀԿ-ների հետ: Իրականացված ծրագրերի արդյունքում ընդլայնվել է աշխատատեղերի քանակը Արմավիրի մարզում՝ մարզպետարանի և ներդրողների ջանքերի շնորհիվ նոր բացված «Հավիցա» թռչնաֆաբրիկայի և Մերձավան համայնքի պլաստմասսե խողովակների գործարանի հաշվին:

Գյուղատնտեսության բնագավառ

2010թ. գյուղատնտեսական տարում 2009թ. հետ համեմատությամբ մարզում պակաս է օգտագործվել 1486հա, որի հիմնական պատճառ են հանդիսացել գարնան երկարատև և հորդառատ անձրևները, արագ զարգացան մի շարք հիվանդություններ և վնասատուներ, որոնք իրենց բացասական ազդեցությունն ունեցան գյուղատնտեսական կուլտուրաների որակական ցուցանիշների վրա: Ստորգետնյա ջրերի մակարդակի բարձրացման հետևանքով զգալի տուժեցին նաև ավելի քան 300հա-ի վրա գործող ջերմոցային տնտեսությունները: 2010թ. մարտ ասմին ջերմաստիճանի կտրուկ նվազման հետևանքով ցրտահարվեցին մարզի պտղատու այգիները, իսկ կարկտահարության հետևանքով տուժեցին 12 համայնքների 1084հա գյուղատնտեսական նշանակության հողատարածությունները:

Արդեն չորրորդ տարին է մարզում հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները չեն գերազանցում 8000հա, որը վկայում է, որ գյուղատնտեսության արտադրության մեջ վերականգնվում է տնտեսությունների մասնագիտացումը գյուղատնտեսության առավել եկամտաբեր ճյուղերի՝ խաղողի, պտղատու և բանջարեղենի տարբեր տեսակների արտադրության ուղղությամբ:

Կազմակերպվել և համակարգվել է համայնքներում առկա անասնապաշտանակի համատարած հաշվառման աշխատանքները:

Համակարգվել և վերահսկվել է մարզային անասնաբուժական ծառայության գործունեությունը համաճարակային միջոցառումների իրականացման ընթացքում, թվով 7 համայնքների 12 գյուղացիական տնտեսությունների մոտ արձանագրվել է «Աֆրիկյան ժանտախտ» հիվանդություն, իսկ մնացած համաճարակային հիվանդությունների գծով իրավիճակը շարունակվում է մնալ կայուն:

Համակարգվել է մարզում գործող «Ոռոգում-Ջրառ» ՓԲԸ-ի 2 մասնաճյուղերի և 10 ՋՕԸ-ների գործունեությունը: Մարզպետի կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից վերահսկվել և կարգավորվել են տարաբնույթ նշանակության ջրատարների մաքրման և վերականգնման աշխատանքները, արդյունքում՝ 347կմ միջտնտեսային, 4833կմ ներտնտեսային ցանցերը, 313 խորքային հորերը և 74 պոմպակայանները պատրաստ են եղել ջրամատակարարմանը, որը սկսվել է ապրիլի 3-ին:

«Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ծրագրի միջոցներով և համայնքների կողմից կատարվող 15% համաֆինանսավորման միջոցով մարզի 24 համայնքներում վերականգնվել է 50.4 կմ երկարությամբ ներտնտեսային ցանց 1407.32 մլն. դրամ արժեքով և 210.78 մլն. դրամ 15% համաֆինանսավորման գումարով: Մարզի 3

համայնքներում հորատվել են ոռոգման 4 խորքային հորեր և մնացած համայնքներում վերանորոգվել են նախկինում չգործող 19 խորքային հորեր: Ընթանում է դեռևս 2009թ.-ից սկսված Թալինի և Արմավիրի մայր ջրանցքների վերանորոգման աշխատանքները՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ, որի պայմանագրային արժեքը կազմում է շուրջ 9.7 մլրդ. դրամ:

2010թ. դրական տեղաշարժեր են արձանագրվել մարզում ոռոգման նոր տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ: Տավրիկ համայնքում շուրջ 100հա հողատարածություն ոռոգվում է անձրևացման եղանակով, իսկ Արևադաշտ համայնքի 250հա խաղողի այգիների և 15հա ջերմատնային տնտեսությունների ոռոգումն իրականացվում է կաթիլային եղանակով:

Մշտական ուշադրության կենտրոնում է եղել հողերի մելիորատիվ վիճակի բարելավման, մարզում առկա 280կմ երկարությամբ բաց կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման և վերանորոգման աշխատանքները: 2010թ. պետբյուջեի միջոցների հաշվին 13 համայնքներում մաքրվել են 82.6կմ երկարությամբ բաց դրենաժային ցանց, որի վրա ծախսվել է շուրջ 106 մլն. դրամ, իսկ «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ծրագրի միջոցով 18կմ երկարությամբ ցանցի մաքրման աշխատանքներ են իրականացվել մերձարաքսյան ենթագոտու ևս 13 համայնքներում: Դեռևս հիմնախնդիր է մնում առկա շուրջ 280կմ երկարությամբ փակ դրենաժային համակարգի մաքրումը և վերանորոգումը:

Ուսումնասիրվել է մարզի գյուղացիական տնտեսությունների պարարտանյութերի նկատմամբ ունեցած պահանջարկը և համակարգվել է Իրանի Իսլամական Հանրապետությունից մարզ ներկրված 1000 տոննա բարձրորակ ազոտական պարարտանյութի ըստ համայնքների բաշխման աշխատանքները: «Գյուղատնտեսության նախարարության կողմից մարզին հատկացվել է 1617կգ ցինկի ֆոսֆիդ տեսակի թունանյութ, որը բաշխվել է մարզի 93 համայնքների առավել վարակված 12936 հա տարածություններում պայքարի աշխատանքներ իրականացնելու համար, որն ամբողջությամբ իրականացվել է:

«Վիվասել-ՄՏՍ» ՓԲԸ-ի հովանավորությամբ մարզի 3 համայնքներում տեղադրվել է 6 հակակարկտային կայան, իսկ պետական ծրագրի շրջանակներում մարզի 13 համայնքներում, որոնք սահմանակից են Թուրքիային, տեղադրվել են 40 հակակարկտային կայաններ, աշխատանքները նախատեսված է նաև շարունակելու 2011թ.:

Մարզում կանաչապատ տարածքների ավելացման ուղղությամբ «Հայաստան ծառատունկ» ծրագրի միջոցով ձեռք է բերվել 22000 հատ գեղատեսիլ և պտղատու ծառատեսակների և թփերի տնկիներ և մարզի 21 համայնքների ավելի քան 27 տարաբնույթ կազմակերպություններում իրականացվել հիմնումներ:

Հողօգտագործման բնագավառ

Կազմվել և հաստատման է ներկայացվել մարզի 2010թ. հողային հաշվեկշիռը: Ներկայացվել մարզի թվով 12 համայնքների ժամանակավոր սխեմաների փաթեթները: Աշխատանքներ են իրականացվել մարզի 15 համայնքներում տեղակայված հակակարկտային 36 կայանքների համար հատկացված հողամասերի ծածկագրերի, մակերեսների, սեփականության սուբյեկտների, նպատակային նշանակության և գործառնական նշանակության համապատասխանության վերաբերյալ և ճշգրտված տվյալները ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման նախարարություն:

Վերահսկողություն է իրականացվել մարզի համայնքներում հողամասերի նպատակային նշանակության փոփոխություն կատարելու հետևանքով բյուջե մուծված գումարների վերաբերյալ և ՀՀ տարածքային կառավարման նախարարություն է ներկայացվել համապատասխան տեղեկատվություն:

Իրականացվել են համայնքների վարչական սահմաններում գտնվող հողամասերի աճուրդային վաճառքի և վարձակալության տրամադրման վերաբերյալ տվյալների

հավաքագրման, ամփոփման աշխատանքներ, և տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման նախարարություն:

ՀՀ կառավարության որոշման նախագիծ կազմելու նպատակով առաջարկություն է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման նախարարություն՝ հողամասերի աճուրդային վաճառքի մեկնարկային գները շուկայական գներին հավասարազոր դարձնելու նպատակով:

Հողային օրենսդրության պահանջների կատարումն ապահովելու նպատակով իրականացվել են ստուգումներ և ցուցաբերվել է մեթոդական օգնություն մարզի 8 համայնքներում: Մարզի թվով 10 համայնքների համար տրվել է եզրակացություն՝ բարձրարժեք հողատեսքերը ցածրարժեք հողատեսքերի փոխադրելու վերաբերյալ: «Հողշինմոնիթորինգ» ՊՈԱԿ-ի և համայնքների ղեկավարների հետ համատեղ իրականացվել են մարզի մի շարք համայնքներում վարչական սահմանների ճշգրտման աշխատանքներ: Աջակցություն է ցուցաբերվել իրավապահ մարմիններին՝ մարզում առկա դամբարանադաշտերի նկատմամբ գանձագողության դեպքերի կանխարգելման և բացահայտման ուղղությամբ, և ՀՀ մշակույթի նախարարությանը՝ մարզի մի շարք համայնքներում պատմամշակութային հուշարձանների և դրանց պահպանման գոտիների ճշգրտման ուղղությամբ:

Բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառ

Մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել մարզի բնապահպանական հիմնախնդիրները և բնության, շրջակա միջավայրի պահպանության 2011-2014թթ. զարգացման ծրագիրը: 2011-2013թթ. միջնաժամկետ ծրագրի հիման վրա Մեծամոր քաղաքին պետական բյուջեից մասհանման կարգով բնապահպանական և առողջական միջոցառումների իրականացման նպատակով հատկացվել է 7.8 մլն դրամ:

Համագործակցություն է իրականացվում «Էկոլոգիա ՎԿՀ-ի» ՍՊԸ-ի հետ, որը մարզի բուժապասարկման կազմակերպություններից հավաքում վնասազերծում է ժամկետանց դեղորայքի և բժշկական տարաբնույթ թափոնները:

Մարզի բոլոր համայնքներում իրականացվում է աղբահանություն: 79 համայնքներ ունեն աղբավայր, մյուս համայնքներում աղբահանությունն իրականացնում են մասնագիտացված ձեռնարկությունները՝ աղբը տեղափոխելով էջմիածին քաղաքի աղբավայր:

Իրականացվել են ՀԱԷԿ-ի միջուկային և ճառագայթային վթարների դեպքում բնակչության պաշտպանության և տեղափոխման ազգային ծրագրի մշակման աշխատանքները, պարբերաբար իրականացվում են մթնոլորտի և շրջակա միջավայրի աղտոտվածության և ռադիոճառագայթման մոնիթորինգներ:

Ճշտվել է մարզի ավելի քան 5500 կմ երկարության ոռոգման ցանցի փաստացի վիճակը, ջրի կորուստը հասնում է 40-60%-ի՝ նպաստելով հողերի էռոզիոն երևույթների զարգացմանն ու հողերի դեգրադացիային: Վերահսկվում է համայնքների ջրամատակարարումն իրականացնող խորքային հորերի և ՕԿՁ-ների սանիտարապաշտպանիչ գոտիների իրավիճակը:

Աջակցություն է ցուցաբերվել բուսական և կենդանական աշխարհի, բնության հատուկ պահպանվող տարածքների, որսի կենդանիների և որսահանդակների պահպանության, կայուն օգտագործման և վերարտադրության, ինչպես նաև որսագողության, ապօրինի ձկնորսության դեմ կազմակերպվող միջոցառումների իրականացմանը:

Մարզի Զրառատ, Եղեգնուտ և Արագածի համայնքների վարչական տարածքներում գործող «Որդան կարմիր» պետական արգելավայրի վերաբերյալ համայնքների ղեկավարներին առաջարկվել է միջոցներ ձեռնարկել արգելավայրի տարածքի պահպանման և ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով համայնքներին վերապահված միջոցառումների անվերապահ իրականացման համար:

Սպորտի և երիտասարդության բնագավառ

Արմավիրի մարզի 2011-2014թթ. ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման և մարզական աշխատանքների առաջնահերթություններն ու ուղղությունները սահմանելիս հիմնական գերակա մարզաձևեր են նախանշվել ծանրամարտը, բռնցքամարտը, ըմբշամարտը, շախմատը, վոլեյբոլը: Մարզիկները պարբերաբար մասնակցել են տարբեր մարզաձևերից մեծահասակների, երիտասարդների և պատանիների աշխարհի, Եվրոպայի, միջազգային այլ առաջնություններին և լավագույն ցուցանիշներ ապահոված ներկայացուցիչները մարզպետի կողմից արժանացել են դրամական պարգևների և պատվոգրերի, դրամական աջակցություն է ցուցաբերվել նաև նշված և այլ մարզաձևերի տարբեր առաջնություններին մարզի մարզիկների և թիմերի մասնակցության ապահովմանը:

2010թ. համայնքներում կառուցվել են ֆուտբոլի խաղադաշտեր, մանկական խաղահրապարակներ: Վերանորոգվել, կահավորվել և գույքով ապահովվել է Արմավիր քաղաքի շախմատի մարզադպրոցը, դպրոցների մարզադահլիճներ:

<<Հայաստանի ծառատունկ-ծրագիր>> բնապահպանական ՀԿ-ի հետ համատեղ տնկվել է 500 ծառ, մարզի 32 համայնքներում տարբեր ծրագրերի և կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքում տնկվել է շուրջ 17000 ծառ:

Մարզպետի կողմից տրվել են միջնորդագրեր ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ նպատակային ընդունելության համար 5 անձանց:

Շուրջ 23 ստեղծագործող երիտասարդներ՝ այդ թվում ուսանողներ, ընդգրկվել են <<Գրական Արմավիր>> ստեղծագործողների ակումբում, որոնց աշխատանքները տպագրվել են մարզպետի հովանավորությամբ լույս տեսած՝ <<Գրական Արմավիր>> 2010 ավանախններում, հուլիս ամսին կազմակերպվել է երիտասարդների եռօրյա ուղևորություն ԼՂՀ Շուշիի շրջան:

Երիտասարդության ոլորտում կատարված աշխատանքների առումով կարևոր է <<Արմավիրի մարզի երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն>> ՀԿ-ի ստեղծումը, որը 2010թ. ընթացքում ակտիվ գործունեություն է ծավալել երիտասարդ քաղաքացիների կողմից ներկայացված խնդիրների և նրանց մասնակցությամբ մշակված ծրագրերի իրականացման ուղղությամբ:

Մշակույթի բնագավառ

Մարզային մշակութային, ինչպես նաև պետական, ազգային ու այլ տոների, զանգվածային միջոցառումների կազմակերպման, ավանդական ազգային ծեսերի վերականգնման ու տարածման նպատակով մշակվել և իրականացվել են բազմաթիվ ծրագրեր:

Մայիսի 28-ին Սարդարապատի հուշահամալիրի տարածքում մեծ շուքով կազմակերպվել և անցկացվել է Հայաստանի առաջին հանրապետության օրվան և Սարդարապատի հերոսամարտի հաղթանակի 91-ամյակին նվիրված տոնակատարություն՝ ՀՀ Նախագահի, ՀՀ վարչապետի, Հայ Առաքելական եկեղեցու բարձրաստիճան հոգևորականների, Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա դեսպանների և բազմաթիվ հյուրերի մասնակցությամբ:

Մարզի պատմամշակութային հուշարձաններ պահպանության և օգտագործման ուղղությամբ կատարվել են ՀՀ օրենսդրությամբ մարզպետարանին վերապահված լիազորություններն ու գործառույթները: Մարզի թվով 2 համայնքներում գտնվող դամբարանադաշտերից կատարված զանձագողության դեպքերի առնչությամբ ՀՀ Արմավիրի մարզի դատախազության կողմից հարուցվել է քրեական գործ, որի քննությունն ընթացքի մեջ է:

2010թ. կազմակերպվել են դպրոցականների, երիտասարդների ուխտագնացություններ՝ դեպի Շուշի, Ստեփանակերտ, Նորավանք, Հաղարծին, Օշական, Տաթևի, Հաղպատի, Սանահինի վանական համալիրներ:

Համալրվել են Արմավիրի մարզային գրադարանի ինչպես նաև գյուղական գրադարանների գրքային հավաքածուները: Մարզում գործող 8 թանգարանների հավաքածուները պարբերաբար համալրվում են նոր թանգարանային նմուշներով՝ հնագիտական նոր նյութերի և

անհատների կողմից կատարած նվիրաբերությունների շնորհիվ: Արմավիրի մարզային, քաղաքային և գյուղական գրադարաններում կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ, շնորհանդեսներ, ցերեկույթներ և ցուցահանդեսներ: <<Սիվիլատաս>> հիմնադրամի դրամաշնորհային ծրագրով (5 մլն. դրամ) վերանորոգվել է Արմավիրի մարզային գրադարանի 150քմ տարածքը, մարզպետի կողմից 160 հազ. դրամ գումար է հատկացվել գրադարանում գրախանութ ստեղծելու համար պահանջվող գույքի ձեռքբերման նպատակով:

2010թ. մարզի 13 արվեստի և երաժշտական դպրոցներ դարձել են համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ՝ իսկ 3 գյուղական համայնքների երաժշտական դպրոցներ վերակազմակերպվել արվեստի դպրոցների՝ միաժամանակ ընդլայնելով գեղարվեստական կրթության ոլորտը:

2010թ. ոչ պետական միջոցներով մարզում կատարվել են հետևյալ աշխատանքները՝

- Վերնորոգվել է Սարդարապատի եկեղեցին (300 հազ. ԱՄՆ դոլար ներդրում ֆիզիկական անձի կողմից), Շահումյան գյուղում կառուցվել եկեղեցի (մոտ 3 մլն. ԱՄՆ դոլարի ներդրում ֆիզիկական անձի կողմից):
- << Արմավիրի մարզպետի աջակցությամբ և հովանավորությամբ Երվանդաշատ գյուղի մուտքի մոտ կառուցվել է Հայոց Երվանդ Դ թագավորին նվիրված հուշաքար-վկայատեղի:
- Էջմիածին քաղաքի կենտրոնական զբոսայգում տեղադրվել է Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հուշարձանը, Չարենցի թաղամասում՝ Ե. Չարենցի արձանը (համայնքի բյուջեի միջոցներով), Աղավնատուն համայնքում՝ Հայրենական Մեծ պատերազմի և արցախյան պատերազմի զոհերի հուշահամալիր, Ծիածան համայնքում խաչքար և պուրակ-զբոսայգի, Մրգաստան համայնքում՝ խաչքար-հուշադրյուր, Էջմիածին քաղաքի թիվ 4 դպրոցի բակում՝ Մեսրոպ Մաշտոցի արձանը:

2010թ. սոցիալական խավերից հաշմանդամներին մարզի մշակութային կյանքին ինտեգրելու նպատակով Էջմիածին քաղաքում ստեղծվել է <<Հայ միասնության խաչ>> կրթամշակութային հաստատությունը:

Էներգետիկայի բնագավառ

Կազմել և << Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն է ներկայացվել մարզի էներգետիկայի ոլորտի 2011-2013թթ. ՄԺԾԾ հայտը:

Համայնքներից ստացվում է տեղեկատվություն՝ ընդերքօգտագործման նպատակով հողհատկացման և առկա հանքավայրերի գործունեության վերաբերյալ և պարբերաբար ստուգայցերի միջոցով ուսումնասիրվում հանքավայրերի և ընդերքի օգտագործման համար հողամասերի հատկացման օրինականությունը:

Կազմակերպվել է Ջանֆիդա և Փշատավան համայնքների սեփականություն հանդիսացող գազատարների նվիրատվության գործընթացը Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս << Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության: Գործընթացը գտնվում է պայմանագրերի կնքման փուլում:

Էներգետիկ օբյեկտների անվտանգ շահագործումն ապահովելու նպատակով մարզի համայնքների կողմից ձեռնարկվել են միջոցներ էլեկտրաանվտանգության գոտիներում նոր շենք-շինությունների կառուցումը բացառելու և տեխնիկապես մեծ դժվարություն չստեղծող խախտումները վերացնելու ուղղությամբ:

Արտակարգ իրավիճակների բնագավառ

Մարզպետն իրականացրել է մարզի քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության գործառույթների համակարգում և ղեկավարում: << կառավարության որոշման համաձայն մարզում ստեղծվել են քաղաքացիական պաշտպանության մարզային 9 ծառայություններ, ծառայությունների ուժեր, ՔՊ կազմավորումներ և տարածքային համալիր փրկարարական ջոկատներ:

ՔՊ և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության միջոցառումների ղեկավարման և կազմակերպման նպատակով մարզպետարանում ձևավորվել են արտակարգ իրավիճակների և բնակչության տարահանման մարզային հանձնաժողովներ:

Մարզում ստեղծվել է ճառագայթային, քիմիական, մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողական համակարգ, հաստատվել է համակարգի գործունեության ապահովման կարգը:

Մշակվել է մարզում 2008-2011թթ. արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների վերացման ծրագիր:

Ուշադրության կենտրոնում են եղել պետական, հանրապետական պլաններով և ծրագրերով նախատեսված պաշտպանության և ՔՊ ուղղությամբ կազմակերպված վարժանքներն և զորավարժությունները, օբյեկտային վարժանքները, ընդհանուր պատրաստության զորահավաքային պատրաստականության, փրկարարական ուժերի պատրաստականության բարձրացման խնդիրները: Իրականացվել է մարզի ՔՊ ղեկավար կազմի, ուժերի հրամանատարների և բնակչության ուսուցում՝ քաղաքացիական պաշտպանության ուղղությամբ: Մշակվել և ներկայացվել են արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ Արմավիրի մարզի միջոցառումները պատշաճ մակարդակով կազմակերպելու համար լուծում պահանջող խնդիրների վերաբերյալ առաջարկություններ՝ վառելիքաքսանյութային, պարենի, դեղորայքի և առաջին անհրաժեշտության ապրանքների պահուստային ֆոնդի ստեղծման, նյութական ռեզերվների պահեստները նորոգելու նպատակով ֆինանսական միջոցների հատկացման, մարզի ապաստարանների, թաքստոցների պահուստային կառավարման կետերի նորոգման և կահավորման վերաբերյալ:

Մշակվել և հաստատվել է մարզի քաղաքացիական պաշտպանության առաջնահերթ միջոցառումների և քաղաքացիական պաշտպանության համակարգի լիակատար պատրաստության բերման միջոցառումների ցանկերը:

Պաշտպանության բնագավառ

Ընդունվել են մարզի երեք տարածաշրջաններում զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի կազմակերպման միջոցառումները պլանավորելու և կազմակերպված անցկացնելու մասին համապատասխան որոշումներ, ըստ որոնց մարզում ստեղծվել է զորահավաքային մարմին, զորահավաքային միջոցառումները կազմակերպված անցկացնելու համար: Մարզում գարնանային և աշնանային զորակոչի պլանը կատարվել է 100%-ից ավելի: Համագործակցություն է իրականացվում հանրապետական զորահավաքային նախապատրաստության աշխատանքները համակարգող պետական այլ մարմինների հետ՝ հատկապես ՀՀ էկոնոմիկայի նախարարության:

Ուշադրության կենտրոնում են եղել զինվորական հաշվառումից և զորակոչից խուսափողների որոնման և հայտնաբերման խնդիրները, հաշվառման է կանգնեցվել կամ բանակ են զորակոչվել մի շարք զորակոչիկներ:

Ճշգրտվել են հանրապետությունից բացակայողների բնակության վայրերը, նրանց հնարավորինս ներգրավելու առաջիկա զինվորական հաշվառմանը և հետագա զորակոչերին: Մշտապես ճշգրտվում են հաշվառման կանգնած զոչակոչիկների ցուցակները:

Ջրամատակարարման բնագավառ

Ջրամատակարարման բնագավառում մի շարք համայնքներում ձեռնարկվել է համապատասխան միջոցառումներ վթարների վերացման, սանիտարապաշտպանիչ գոտիների վերականգնման և բնակչությանը մատակարարվող խմելաջրի վարակազերծման ուղղությամբ: Բնակավայրերի կանաչապատման, մաքրման և աղբահեռացման ուղղությամբ կազմակերպվել և համակարգվել է մարզի կոմունալ կազմակերպությունների գործունեությունը:

<<Նոր Ակունք>> ՓԲԸ-ի միջոցներով կատարվել է 14.6 մլն. դրամի հիմնանորոգման աշխատանքներ, <<Էջմիածնի ջրմուղ կոյուղի>> ՓԲԸ-ի միջոցներով՝ 28.0 մլն. դրամի հիմնանորոգման աշխատանքներ:

Հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների հետ համագործակցության բնագավառ

Մարզպետարանի և ոստիկանության համագործակցության ապահովմանն ուղղված միջոցառումները նախատեսվել են ինչպես մարզպետարանի 2010թ. աշխատանքային ծրագրերով, այնպես էլ մարզպետարանի և ոստիկանության համատեղ նախատեսած և իրականացրած միջոցառումների շրջանակներում: Մարզխորհրդի բոլոր նիստերին մասնակցել է մարզային ոստիկանության վարչության պետը, առանձին դեպքերում, նաև ոստիկանության տարածքային կառույցների ղեկավարները:

Մարզում շարունակվում են հետևյալ աշխատանքները ներքոհիշյալ ուղղություններով՝

- ա) երիտասարդության շրջանում կազմակերպվող միջոցառումներ
- բ) դպրոցականների և անչափահասների հետ կազմակերպվող միջոցառումներ
- գ) մարզի ազգաբնակչության իրավագիտակցության բարձրացմանն ուղղված աշխատանքներ:

Մարզպետին է ներկայացվել մարզում հանցագործությունների վիճակագրության մասին օպերատիվ տեղեկատվությունը, որոշները դարձել են քննարկման առարկա ինչպես մարզխորհրդի նիստերում, այնպես էլ մարզպետի մոտ տեղի ունեցած խորհրդակցություններում:

2010թ. մարզպետի կողմից ոստիկանությանը տրվել են հանձնարարականներ մարզում կազմակերպված մասսայական, մշակութային, սպորտային միջոցառումների ժամանակ հասարակական կարգի պահպանության ապահովման, ինչպես նաև ՏԻՄ-երի ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում հասարակական կարգի պահպանության ապահովման վերաբերյալ: Ընդունվել են համատեղ աշխատանքային ծրագրեր քաղաքաշտպանության և արտակարգ իրավիճակների վարչության և մարզային ոստիկանության հետ: Ապահովվել է սերտ համագործակցություն և գործընկերություն հասարակական, քաղաքական կազմակերպությունների և այլ միավորումների հետ, որոնց հետ համատեղ կազմակերպվել են մի շարք միջոցառումներ մարզի հանրության, սոցիալական աջակցության կարիք ունեցող այնպիսի խմբերի համար:

Միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության և երկկողմանի հարաբերությունների ոլորտ

<< կառավարության և ՌԴ կառավարության միջև կնքված միջազգային պայմանագրերի շրջանակներում իրականացվել են համագործակցություններ ՌԴ Յարոսլավլի, Սվերդլովսկի և Մոսկվայի մարզերի միջև: Յարոսլավլի մարզի կառավարության և Արմավիրի մարզպետարանի միջև 2008թ. նոյեմբերին կնքված առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային համագործակցության համաձայնագրի շրջանակներում իրականացվել են աշխատանքային խմբերի ստեղծման, տնտեսական ներուժի ուսումնասիրման և տեղեկատվության փոխանակման աշխատանքներ: Սվերդլովսկի մարզի հետ իրականացվել են տեղեկատվական փոխանակման, երկկողմ տնտեսական ներուժի ծանոթացման, նախապատրաստական աշխատանքներ՝ 2011թ. ընթացքում համապատասխան փոխհամագործակցության համաձայնագրի ստորագրման համար: Մոսկվայի մարզի կառավարության և << կառավարության միջև կնքված համաձայնագրի շրջանակներում իրականացվել են տեղեկատվական փոխանակման փոխադարձ բազմակողմ աջակցության աշխատանքներ միջկառավարական հանձնաժողովի կազմում:

ՀՀ և ԻԻՀ միջև կնքված միջպետական համաձայնագրերի շրջանակներում մարզպետարանի աջակցությամբ կնքվել և իրագործվել են Արմավիրի մարզի և Իրանի Իսլամական Հանրապետության տնտեսավարող սյուբեկտների միջև առևտրային պայմանագրեր: ԻԻՀ Արևմտյան Ատրպատականի նահանգի հետ 25.06.2009թ. կնքված համագործակցության վերաբերյալ փոխըմբռման հուշագրի շրջանակներում իրականացվել են առևտրատնտեսական պայմանագրերի կնքման, կուլտուր-մշակութային, սպորտային միջոցառումների իրականացման աշխատանքներ, տեղի են ունեցել երկողմ այցելություններ մշակութային կոթողներ, ուղտագնացություն Թադեյի վանք, ըմբշամարտի և վոլեյբոլի մրցումներ:

ՀՀ և Սիրիայի Հանրապետության միջև կնքված միջպետական համաձայնագրերի շրջանակներում կատարվել է Սիրիայի պետական պաշտոնատար անձանց ծանոթացումը հայ մշակութային կոթողների հետ, մասնավորապես՝ Արմավիրի մարզում, նախատեսվում է փոխադարձ այց: Սիրիայի Հանրապետության Դեյր-էզ-Ջոր նահանգապետարանի և Արմավիրի մարզպետարանի միջև ստորագրվել է առևտրատնտեսական, գիտատեխնիկական, մշակութային համագործակցության համաձայնագիր:

ՀՀ և Սլովակիայի Հանրապետության միջև կնքված միջազգային պայմանագրերի շրջանակներում տեղի են ունեցել Արմավիրի մարզի գործարարների հանդիպում Սլովակիայի Հանրապետության գործարարների հետ, տարվում են ակտիվ բանակցություններ մի շարք ուղղություններով պայմանագրեր կնքելու համար:

Ակնկալվում է Ավստրիայի հայ համայնքի հետ համագործակցության հաստատում, 2010թ. դեկտեմբերի 20-ին տեղի է ունեցել հանդիպում համայնքի ներկայացուցիչների և եկեղեցիական առաջնորդների հետ, կկազմակերպվի փոխայցելություն: Ակնկալվում է նաև Գերմանիայի Դաշնության Իդշտայն քաղաքի հետ համագործակցություն, վերջիններիս իրավական հիմքերի և համապատասխան փաստաթղթերի տրամադրում՝ մարզին բուժսարքավորումներ բարեգործական հիմունքներով տրամադրելու համար:

Պետական սեփականության պահպանության և արդյունավետ օգտագործման բնագավառ

Պետական սեփականության պահպանության և արդյունավետ օգտագործման ուղղությամբ համապատասխան տեղեկատվությունը սահմանված կարգով ներկայացվում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն:

Արմավիրի մարզպետարանի աշխատակազմին ամրացված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման աշխատանքներն ավարտված են, իսկ էջմիածնի նախկին շրջխորհրդի գործկոմի շենքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման ուղղությամբ իրականացվող աշխատանքների ընթացքը կասեցվել է ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանումում:

Մարզպետարանի ենթակայության ՊՈԱԿ-ներին ամրացված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցմանն ուղղված միջոցառումները կազմակերպվել և ավարտվել են, միաժամանակ տեղեկատվություն է ներկայացվել այն ՊՈԱԿ-ների մասով, որոնց ամրացված անշարժ գույքն ունի համայնքային պատկանելություն:

Քննարկվել են պետական գույքի կառավարման արդյունավետության բարձրացմանն ուղղված մի շարք իրավական ակտերի նախագծեր և համապատասխան դիրքորոշումները ներկայացվել են ինչպես ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչություն, այնպես էլ ՀՀ կառավարության աշխատակազմ:

Մարզպետի կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպում

2010թ. քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները օպերատիվ և արդյունավետ քննարկելու նպատակով ապահովվել է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելության կազմակերպումը: Քաղաքացիների կողմից բարձրացված հարցերը վերաբերել են աշխատանքի և աշխատավարձի, ֆինանսական, գյուղատնտեսական, գիտական, կուլտուրայի, կրթական և մանկական հիմնարկների, առողջապահության և այլ բնագավառներին, որոնք օրենսդրությանը համապատասխան նույնպես ստացել են իրենց հնարավոր լուծումները:

Մարզպետի մոտ կազմակերպված յուրաքանչյուր ընդունելությունից հետո ընթացիկ և ամեն եռամսյակը մեկ ամփոփ կարգով ապահովվել է ինչպես տվյալ ընդունելության, այնպես էլ եռամսյակային կտրվածքով բարձրացված հարցերի քննարկման արդյունքների մասին մարզպետարանի համապատասխան կայքով տեղեկատվության հրապարակումը:

2010թ. մարզպետարանում ներդրված Մալբերի համակարգի շնորհիվ ավելի օպերատիվ է դարձել փաստաթղթաշրջանառությունը, որի արդյունքում բարձրացել է կատարողական կարգապահությունը, փաստաթղթերով սահմանված հանձնարարականների ժամկետների կատարման, դրանց վերահսկողության իրականացման և հաշվետվողականության բարձրացման ուղղությամբ:

Մարզպետի կողմից կատարված աշխատանքների հանրային իրազեկում

Ապահովվել է մարզպետարանի տեղեկատվական քաղաքականության իրականացումը: Իրականացվել են մարզպետարանի տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգման աշխատանքները, մարզպետարանի պաշտոնական կայքի տեղեկատվական սպասարկումը և ապահովվել է համակարգչային տեխնիկական բազայի արդյունավետ օգտագործումը, ինչպես նաև նոր համակարգիչների ձեռքբերումը:

Մարզպետարանի գործունեության պատշաճ լուսաբանման կազմակերպման նպատակով մարզպետարանի գործունեության բոլոր ոլորտների վերաբերյալ պատրաստվել են հաղորդագրություններ, որոնք վերլուծվել են և տեղադրվել մարզպետարանի պաշտոնական կայքում, անհրաժեշտության դեպքում դրանք տրամադրվել են նաև մարզային ՋԼՄ-ին: Իրականացվել է պարտադիր հրապարակման ենթակա տեղեկատվության հրապարակումը, լրատվամիջոցների հետ նրանց աշխատանքային հանդիպումների նախապատրաստումը և կազմակերպումը:

Ապահովվել է մարզպետի այցելությունների, հաշվետվությունների, քաղաքացիական ծառայողների և համայնքների ղեկավարների կիսամյակային և եռամսյակային հաշվետվությունների, համայնքապետարաններում թափուր պաշտոնների համար հայտարարվող մրցույթների, մարզպետի և մարզպետարանի մյուս պաշտոնատար անձանց մոտ տեղի ունեցած քաղաքացիների ընդունելությունների և նրանց կողմից բարձրացված հարցերի և դրանց լուծման լուսաբանումը:

Ապահովվել է մարզպետարանում անցկացվող խորհրդակցությունների, մարզխորհրդի նիստերի, քննարկումների, թրեյնինգների, բանակցությունների և այլ միջոցառումների լուսաբանման կազմակերպումը և դրանց արձանագրումն ու արխիվացումը: Աջակցություն է ցուցաբերվել հեռուստահաղորդումների, տեսանյութերի, հեռուստաֆիլմերի ստեղծմանը: Մարզպետարան ստացված տարբեր լրատվամիջոցներից և լրագրողներից հարցումներին տրվել են ժամանակին և սպառիչ պատասխաններ և անհրաժեշտ տեղեկատվություն:

«Քաղաքացիական ծառայության մասին օրենսդրության կիրառումը մարզպետարանում»

2010թ. մարզպետարանի աշխատակազմի երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը անվանափոխվել է ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի, հաստատվել է բաժնի կանոնադրությունը և բաժնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը: 2010թ. աշխատակազմում իրականացվել են թվով 5 հաստիքային միավորների կրճատումներ: 2010թ. ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի որոշումներով հաստատված ծրագրերով վերապատրաստվել են թվով 49 քաղաքացիական ծառայողներ, ատեստավորվել են թվով 30 քաղաքացիական ծառայողներ: 2010թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ աշխատակազմում առկա է թվով 4 քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն: Հայտարարված մրցույթների արդյունքներով համալրվել են 12 պաշտոններ, համապատասխան դասային աստիճաններ են շնորհվել 14 քաղաքացիական ծառայողների:

ՀՀ ՔԾԽ աշխատակազմի վերահսկողության և վերլուծության վարչության մասնագետների կողմից ուսումնասիրվել է աշխատակազմում քաղաքացիական ծառայության գործընթացների համապատասխանությունը ՀՀ օրենսդրության պահանջներին, որի արդյունքում որևէ խախտում չի հայտնաբերվել:

Համայնքի ավագանու ընդունած որոշումների նկատմամբ մարզպետի իրականացրած հսկողություն և մարզպետի ընդունած որոշումների և արձակած կարգադրությունների իրավաչափությունը

Ստացել են մարզի համայնքների ավագանու բոլոր որոշումները, առարկությունները վերաբերել են օրենսդրական տեխնիկայի կանոնների կիրառմանը, որոնք համայնքների ղեկավարների կողմից հաշվի են առնվել ամբողջությամբ, որոշումները համապատասխանեցվել են օրենսդրության պահանջներին:

Մարզպետի կողմից ընդունված գերատեսչական, իրավական ակտերի նկատմամբ իրականացված իրավական հսկողության արդյունքում օրենսդրության հետ հակասություններ չեն արձանագրվել:

Համայնքի ղեկավարի սեփական և պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման նկատմամբ մարզպետի իրականացրած հսկողությունը

Վարչական հսկողությունն իրականացվել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հաստատված տարեկան աշխատանքային ծրագրով: Արձանագրված թերությունների վերահսկողության արդյունքում համայնքների ղեկավարների կողմից ներկայացվել են համապատասխան գրություններ թերությունների վերացման վերաբերյալ: Թերությունների վերացման վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարություն:

2010թ. հրավիրված մարզխորհրդի նիստերում քննարկվել, ուշադրության կենտրոնում է պահվել և ոլորտում ամենօրյա համագործակցություն է ապահովվել ՀՀ տարածքային կառավարման նախարարության համապատասխան վարչությունների հետ ներքոհիշյալ հարցերի շրջանակներում.

- համայնքների կողմից իրենց սեփական եկամուտների հավաքագրման, հողերի օտարման արդյունավետության բարձրացման, հողերի և գույքի վարձակալությամբ տրամադրման արդյունավետության բարձրացման, հողի հարկի և գույքահարկի գծով ապառքների հավաքագրման, համայնքների ղեկավարների աշխատակազմերում աշխատավարձի նարիսկին պարտքերի մարման և նոր պարտքերի գոյացման անթույլատրելիության, համայնքային ծառայության բնագավառում տեղ գտած խնդիրների, մարզի սոցիալ-տնտեսական զարգացման առանձին ոլորտներին վերաբերող խնդիրների, սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագիր քննարկման, հանրապետական գործադիր

մարմինների տարածքային ծառայություններից ստացված միջնորդագրերի և միջնորդությունների քննարկման, ինչպես նաև օրենսդրության մեկնաբանության և քննարկման ներկայացված նորմատիվ իրավական ակտերի նախագծերի իրազեկման և այլ՝ մարզի համար կարևոր նշանակություն ունեցող հարցեր:

Համայնքային ծառայության բնագավառ

2010թ. <<Հայաստանի համայնքների հանրապետական ասոցիացիա>> ՀԿ-ի հետ համատեղ կազմակերպվել է մարզի համայնքների գլխավոր և առաջատար պաշտոններ զբաղեցնող թվով 115 համայնքային ծառայողների վերապատրաստման դասընթացներ:

2010թ. մարզում համայնքային ծառայության թափուր պաշտոնների համալրման նպատակով հրապարակվել են թվով 124 հայտարարություններ: Դրանք տեղադրվել են մարզպետարանի ինտերնետային կայքում, իսկ հայտարարված մրցույթների մասին կազմված ժամանակացույցները, ինչպես նաև հայտատարությունների տեքստերը՝ փաստաթղթային և էլեկտրոնային տարբերակներով, ժամանակին ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման նախարարություն:

Պետական լիազորված մարմին է ներկայացվել նաև յուրաքանչյուր ամսվա ընթացքում անցկացված մրցույթների և ատեստավորումների արդյունքները: Մարզի համայնքներից հավաքագրվել և ՀՀ տարածքային կառավարման նախարարություն է ներկայացվել համայնքային ծառայության պաշտոնների գրանցամատյանային տվյալները: